ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 04 փետրվարի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Վ. Պողոսյանի
Անդամակցությամբ՝ Կ. Բալայանի
Ֆ. Թոխյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Սուրիկ Ղազարյանի անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Սուրիկ Ղազարյանը 14.01.2014թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով քննության առնել եւ որոշել «ՀՀ դատական օրենսգիրքն ուժի մեջ մտնելու մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-141-Ն օրենքով փոփոխված՝ «ՀՀ դատական օրենսգիրքն ուժի մեջ մտնելու մասին» ՀՀ օրենքի 2.1-րդ հոդվածի «փարիքային» դրույթի կամ «ՀՀ դատական օրենսգիրքն ուժի մեջ մտնելու մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-141-Ն օրենքի 1-ին հոդվածի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 1-ին, 3, 8, 14.1, 31, 37, 94 եւ 97-րդ հոդվածների պահանջներին:

Դիմողը գտնում է, որ գործի հիմքում ընկած վեճի առարկա իրավունքը սոցիալական ապահովության միջոցի իրավունք լինելով հանդերձ՝ գույքային իրավունք է, հանդիսանում է դատական համակարգի անկախության գրավականներից մեկը եւ երաշխավորված է ՀՀ Սահմանադրությամբ: Միաժամանակ, վիճարկվող օրենքի դրույթն ապահովում է երաշխավորված կենսաթոշակի իրավունքը պաշտոնաթող դատավորներից միայն նրանց համար, ովքեր հասել են կենսաթոշակային տարիքի եւ նրանց նկատմամբ նշանակվել է «տարիքային» կենսաթոշակ՝ չապահովելով այն դատավորների համար, ովքեր պաշտոնավարման ընթացքում ձեռք են բերել այնպիսի հիվանդություններ, որոնք խոչընդոտում են դատավորի պարտականությունները կատարելուն:

Ըստ դիմողի՝ վիճարկվող դրույթի գործողությամբ առաջանում է անհամաչափություն. վիճարկվող նորմը մինչեւ դրա ընդունումը դատավոր դարձած եւ այդ պահին գործող բոլոր դատավորների վրա տարածելով՝ առողջական պատճառներով պաշտոնաթող եղած դատավորները հայտնվել են էապես անհամաչափ բեռի տակ եւ էապես նման վիճակում գտնվող անձանց համեմատ դրսեւորվել է տարբերակված մոտեցում՝ առանց որեւէ օբյեկտիվ հիմքի՝ օրենքի առջեւ բոլորի հավասարության սահմանադրական սկզբունքի խախտմամբ:

Դատական կազմն անհատական դիմումի նախնական ուսումնասիրության արդյունքներով պարզեց, որ դիմումը սահմանադրական դատարանի կողմից ենթակա է քննության, քանի որ.

- դիմումում առաջադրված հարցերը ենթակա են սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31 եւ 69-րդ հոդվածների պահանջներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

ՈՐՈՇԵՑ.

1. Հ.Քաղաքացի Սուրիկ Ղազարյանի դիմումի հիման վրա՝ «ՀՀ դատական օրենսգիրքն ուժի մեջ մտնելու մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-141-Ն օրենքով փոփոխված՝ «ՀՀ դատական օրենսգիրքն ուժի մեջ մտնելու մասին» ՀՀ օրենքի 2.1-րդ հոդվածի «գարիքային» դրույթի կամ «ՀՀ դատական օրենսգիրքն ուժի մեջ մտնելու մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-141-Ն օրենքի 1-ին հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

2. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

04 փետրվարի 2014 թվականի
ՍԴԴԿՈ / 2-3